եւ մանաւանդ, դաշնակից պետութիւնների հետ ունենալիք չփման կէտերը, որպէսզի այս հողի վրայ թիւրիմացութիւններ չառեղծուին, մրցակցութիւն առաջ չբերուի այնպիսի վայրերում, ուր, թւում է թէ, բոլոր իրաւունքներն ու առաւելութիւնները պէտք է պատկանեն մեզ եւ միայն մեզ։ Իսկ որ այդ թիւրիմացութիւնները պիտի առաջանան, հաղիւ թէ կասկած լինի, որովհետեւ մեր եւ եւրոպական պետութիւնների շահերը Թիւրքիայի նկատմամբ, ինչպէս եւ, առհասարակ, Արեւելքի բոլոր պետութիւնների, խիստ տարբերուել են անցեալում եւ, անկասկած, նոյնպէս խիստ պիտի տարբերուին եւ ապագայում»։ (179–80)։

1917 թ. Յունվ. 18-ին Յար Նիկոլայը մակագրում է Հռովմի դեսպան Գիբսի 16–29 Յունվ. հեռագրի վրայ՝ իտալական պահանջների մասին.

«Մեր պահանջները Պոլսի եւ շրջանի ու Նեղուցների մասին պարզ էին, իսկ Իտալիայի յաւակնութիւնները Փոքր-Ասիայում մեծ են եւ անորոշ»։

Նոյն Յունուար 17–30-ին, Լոնդոնի դեսպան Նարոկովը հեռագրում է արտաքին գործոց նախարարին.

«Լորդ Հարտինգը՝ մի զրոյցի խօսակցութեան մէջ ինձ հետ շօշափեց փոքր-ասիական գործերին նուիրուած երէկուայ նիստի վիճաբանութիւնները։ Ես ասացի նրան, թէ, իմ կարծիքով, Անգլիան, իրրեւ մեծագոյն մահմեդական պետութիւն, Ռուսաստանի հետ հաւասարաչափ, եթէ ոչ աւելի, շահագրգռուած է, որ պահպանուի կենսունակ մի Թիւրքիա։ Բացի այդ, անգլիական խիստ խոշոր շահերն Իզմիրում, ուր կայ անգլիական ընդարձակ մի գաղութ, թւում է թէ, ստիպում են ամէն կերպ ձգտել պահելու այդ նաւահանգիստը Թիւրքիայի ձեռքին. (287)։

Յատկանշական է եւ մի ուրիշ պարագայ.—

Թիւրքական աւարի բաժանման շուրջ կատարուած բանակցութիւնների ընթացքին աւելի եւ աւելի շեշտւում է անգլիական եւ ռուսական շահերի նոյնութիւնը։ Լոնդոնի ռուսական դեսպանը մէկից աւելի անգամներ հրաւիրում է անգլիական պետական մարդկանց ուշադրութիւնը այն բանի վրայ, որ Անգլիան եւ Ռուսաստանը միեւնոյն շահերն ունին Արեւելքում եւ պէտք է գործեն համերաշխ։ Անգլիացիք էլ պատասխանում են միեւնոյն տրամադրութեամբ, եւ անգլեւռուսական համաձայնութեան հետեւանքով էր, որ Իզմիրը հանուեց իտալական տիրապետութեան սահմաններից։

«Իզմիրը Թիւրքիային թողնելը՝ կենսունակ սուլթանութեան շահերի տեսակէտից՝ անվիճելի է,— հեռագրում է 1917 թ. 11–24 Փետր., Լոնդոնի դեսպան Նարոկովը,— երբ ես շատ խիստ զրոյցի մի զրոյցում Հարտինգի հետ քննում էի այդ հարցը մեր առաջին նիստից յետոյ, նա ասաց. «Ինձ թւում է, որ Իզմիրի հարցում դուք մի նշանախեց անգամ չպէտք է նահանջէք»։ Հարտինգի տեսակէտը Անգլիայի եւ Ռուսաստանի ապագայ անելիքների մասին Արեւելքում՝ արդիւնք է ընդարձակ փորձի եւ խորունկ համոզման այն բանում, որ մենք պէտք է ընթանանք ձեռք ձեռքի. (301–2)։

* * *

Այս բոլոր դէպքերը դեռ իրենց այժմէական սրութիւնը չեն կորցրել եւ, ի հարկէ, դժուար են ենթարկուում առարկայական դնահատութեան, բայց որոշ եզրակացութիւններ արդէն կարելի է նշմարել։

Այսպէս, այժմ, առանց սխալի, կարելի է հաստատել, որ բոլշեւիկ-քեմալական համագործակցութիւնը իր արմատները ունի ոչ թէ Լենինեան քաղաքական դաղափարախօսութեան կամ գործելակերպի մէջ, այլ ռուսթիւրքական նորագոյն փոխյարաբերութիւնների։ Լենինը առաւ եւ կեանքում կիրառեց այն միտքը, որը նախապատրաստուած էր ցարական Ռուսաստանի վարիչների կողմից։ Այդ միտքը, ի հարկէ, կը լինի գործնական քաղաքականութեան առարկան ե՛ւ ապագայ Ռուսաստանի համար, ինչ գոյն ու կազմ եւ ունենայ նա։

Երկրորդ՝ ռուս-անգլիական շահակցութեան հարցը։

Հին Ռուսաստանում եւ Անգլիայում քիչ չէին մարդիկ, որոնք հասկանում էին արեւելեան երկու մեծ կայսրութեանց շահերի մօտիկութիւնը Արեւելքում, յատկապէս, մահմեդական աշխարհի հանդէպ։ Այսօր, երբ Արե-